



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,
շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՆԱԴԵԺԴԱ ԱՖՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԷՄԻՍԻՈՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. բնապահպանական վճար, էմիսիոն վճար, սահմանային թույլատրելի խտություն, շրջակա միջավայրի որակ, շրջակա միջավայրի վնաս, բնապահպանական միջոցառումներ

Հողվածում հակիրճ ներկայացվել են արտանետումների կամ էմիսիոն վճարների համակարգի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում: Համեմատական վերլուծվել են արտանետումների, բնապահպանական վճարների և ծախսերի համամասնությունը և դրանց նպատակային նշանակությունը շրջակա միջավայրի որակի բարելավման հարցում: Կատարվել են եզրահանգումներ, որ ՀՀ-ում էմիսիոն համակարգը, որպես արտանետումների կարգավորման տնտեսական մեխանիզմ, հասցեական և նպատակային կիրարկման ընթացքում միայն կարող է ապահովել տնտեսական և բնապահպանական խնդիրների փոխհամաձայնեցված լուծումներ:

Շրջակա միջավայրի պահպանության արդի քաղաքականության հիմքում «աղտոտողը վճարում է» սկզբունքն է, որի կիրարկման միջոցներից է շրջակա միջավայր արտանետումների համար սահմանված վճարների կամ էմիսիոն վճարների համակարգը: Դրա նպատակն է պարտադիր վճարների կամ հարկատեսակների միջոցով գոյացնել դրամական միջոցներ կամ ֆինանսական ռեսուրսներ, որոնք կօժանդակեն շրջակա միջավայր արտանետումների կրճատմանը կամ կանխարգելմանն ուղղված բնապահպանական միջոցառումների իրականացմանը: Այսինքն՝ այս համակարգը ենթադրում է ապահովել կամ ձևավորել տնտեսավարող սուբյեկտի էկոլոգիական պատասխանատվության մակարդակը, քանի որ, ըստ էության, փոխհատուցում է արդեն կանխարգելված էկոլոգիական վնասի սահմանային ծախսերը: Համաձայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների» մասին ՀՀ օրենքի՝ բնապահպանական վճար պետական բյուջե, ինչպես նաև նախատեսված դեպքերում՝ համայնքի բյուջե վճարվող պարտադիր վճարը, որի նպատակն է բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացումը: Հայաստանում կիրարկվում է երեք տիպի բնապահպանական վճար.

1. վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար.
2. արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար.
3. շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար¹:

¹ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների» մասին ՀՀ օրենք, 1998:

Բնապահպանական վճարներն ըստ տեսակների, 2011-2015 թթ.,¹ հազ. դրամ

	2011	2012	2013	2014	2015
Բնապահպանական վճարներ	803 481.9	546 467.3	706 085.6	1 430 354.4	1 215 434.1
<i>այդ թվում՝</i>					
ջրային ավազան թափված վնասակար նյութերի դիմաց	366 106.4	223 554.0	237 846.3	221 967.9	222 546.5
արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի դիմաց	293 669.0	163 388.0	133 766.3	131 243.0	212 696.0
թափոնակուտակիչներում տեղադրված թափոնների դիմաց	64 855.4	66 350.4	73 332.2	64 775.4	77 156.2
շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար	78 851.1	93 174.9	261 140.8	1 012 368.1	703 035.4

Այսպիսով՝ Հայաստանում գործող բնապահպանական վճարների միայն առաջին տեսակը կարելի է անվանել էմիսիոն: Իսկ 01.01.2018 թ. ուժի մեջ մտնող հարկային նոր օրենսգրքում բնապահպանական վճարները (ըստ տեսակների) վերանվանվել են բնապահպանական հարկեր (ըստ տեսակների): Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության վճարների կամ գանձումների համակարգում կարելի առանձնացնել հետևյալը.

1. շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության և բնական ռեսուրսների օգտագործման ուղղակի վճարներ,
2. էկոլոգիական հարկեր,
3. սահմանային թույլատրելի արտանետումների իրավունքների վաճառք²:

Գործնականում էմիսիոն վճարները կարող են հանդես գալ և՛ որպես հարկատեսակ, և՛ որպես պարտադիր վճարներ: Ըստ երևույթին, դա պայմանավորված է տվյալ երկրի տնտեսաքաղաքական սկզբունքներով, սակայն, նշեմ նաև, որ ըստ բնապահպանական ենթատեքստի, պարտադիր վճարների առանձնահատկությունն այն է, որ դրանք ենթադրում են պետական մակարդակով փոխհատուցող և կանխարգելող ծառայությունների կամ միջոցառումների իրականացում: Տեսականորեն, էկոլոգիական վճարների հաշվարկման մեթոդական մոտեցումների հիմքում տնտեսավարող սուբյեկտի՝ շրջակա միջավայրի աղտոտման արդյունքում և հետևանքով վնասի լրիվ տնտեսական հաշվարկը կամ բնապահպանական միջոցառումների իրականացմանն անհրաժեշտ ծախսերն են: Այսինքն՝ կայուն զարգացման ռազմավարական քաղաքականության հիմքերը Հայաստանում դեռևս կայուն դիրքորոշում չունեն մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Բնապահպանական վճարների հաշվարկման մեթոդական մոտեցումը հիմնականում հիմնված է պետության կողմից բնապահպանական միջոցառումների իրականաց-

¹<http://www.armstat.am/am/?module=publications&mid=6&id=1821>

² Магрил Е.Р., Березюк М.В., Рукавишникова И.В., Экономика природопользования: междисциплинарный подход, учебное пособие, М., 2013.

մանն անհրաժեշտ ծախսերի որոշման վրա, երբ անտեսվում են շրջակա միջավայրի վնասների կանխարգելման հնարավորությունները: Հայաստանում գործող և հավաքագրված էմիսիոն վճարների տնտեսապես անարդյունավետ և ոչ հասցեական օգտագործման հիմնավորումները չեն ապահովում փոխհատուցող և կանխարգելող միջոցառումների իրականացման հնարավորություններ: Հողվածում առավել խորությամբ ուսումնասիրված օդային ավազան արտանետումների համար սահմանված էմիսիոն վճարների համակարգը:

2015 թ. տվյալների համաձայն՝ բնապահպանական վճարներն ըստ տեսակների և համապատասխան ընթացիկ ծախսերի պարզ տոկոսային հարաբերակցությամբ հետևյալն է. արտանետումների անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի դիմաց վճարն ընդհանուրի հարաբերակցությամբ 2,6% է, ջրային ավազան թափված աղտոտիչ նյութերի դիմաց վճարը՝ 7,0%, թափոնակուտակիչներում թափոնների տեղադրման դիմաց վճարը՝ 7,4%, իսկ բնապահպանության ընթացիկ ծախսերը, համապատասխանաբար՝ 6,3%, 49,7% և 42,3%: Այսինքն՝ բնապահպանական և բնօգտագործման վճարները գրեթե ամբողջությամբ միտված են հստակ՝ մի քանի բնապահպանական միջոցառումների իրականացմանը, սակայն ոչ շրջակա միջավայրի որակի բարելավմանը:

Աղյուսակ 2

Բնապահպանության ընթացիկ ծախսերն ըստ բնապահպանության ոլորտների, 2011-2015 թթ¹., մլն դրամ

	2011	2012	2013	2014	2015
Բնապահպանության ընթացիկ ծախսեր, ընդամենը	6 514.3	7 069.9	9 265.4	10 959.5	8 473.1
<i>այդ թվում՝</i>					
ջրային պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման համար	2 965.3	3 141.8	3 276.7	4 148.3	4 213.6
որից՝ վճարված այլ կազմակերպություններին կեղտաջրերի ընդունման և մաքրման համար	395.8	431.7	454.4	1 078.8	420.8
մթնոլորտային օդի պահպանության համար	455.6	373.1	290.9	369.4	537.1
արտադրական թափոններից և այլ վնասակար նյութերից հողի պահպանության համար	2 894.5	3 203.2	5 686.5	6 414.8	3 588.1
որից՝ վճարված այլ կազմակերպություններին թափոնների ընդունման, պահպանման, վնասագերծման և ոչնչացման համար	2 750.6	3 033.4	3 373.4	3 470.2	3 271.7
հողերի վերամշակելիացման (ռեկուլտիվացիա) համար	198.9	351.8	11.3	27.0	134.3

Այժմ փաստացի ներկայացնենք վիճակագրական տվյալներ նույն ժամանակահատվածում շրջակա միջավայրի որակի և բնապահպանական միջոցառումների իրականացման մասին: Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը 2014 թ. կազմել է՝ ընդհանուր 270,6 հազ. տ, այդ թվում՝ ավտոտրանսպորտից՝ 142,2 հազ. տ, իսկ 2015 թ.՝ 268,7 հազ. տ և 139,8 հազ. տ: Ընդ որում, Հայաստանում ՍԹԽ-ը (վնասակար նյութերի

¹<http://www.armstat.am/am/?module=publications&mid=6&id=1821>

արտանետման համար սահմանային թույլատրելի խտություն) սահմանված է 200-ից ավելի վնասակար նյութերի համար, որոնք, ըստ տեսակների, խմբավորված են 24 խմբում, սակայն շրջակա միջավայր վնասակար նյութեր արտանետելու դիմաց վճարի դրույքաչափերը, ըստ ամրագրված աղբյուրների, 6 վնասակար նյութերի համար են:

Աղյուսակ 3

Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերը, %, 2012-2015 թթ.^{1,2}

Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերը	2012	2013	2014	2015
Ածխաջրածիններ (առանց ՑՕՄ-ի)	68,08	66,44	67,30	65,30
ազոտի օքսիդներ (առանց ենթօքսիդի)	1,13	1,30	1,17	65,303
ածխածնի օքսիդ	2,14	2,17	2,40	2,47
ծծմբային անհիդրիդ	24,86	26,56	24,98	23,47
փոշի	3,06	3,03	3,24	3,91
այլ նյութեր	0,73	0,50	0,91	0,91

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, արձանագրվել է արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված ածխաջրածինների, ծծմբային անհիդրիդի ծավալների կրճատում: Այս դրական միտումը պայմանավորված է մի շարք նորմատիվաիրավական ակտերի հստակ սահմանմամբ: Մասնավորապես՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին», ինչպես նաև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով, ամրագրվել է, որ բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը: Բացի այդ, 2017 թ. կազմավորված բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը մեկ շաբաթվա կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն իրավախախտումների և շրջակա միջավայրին հասցված վնասի վերաբերյալ (բացառությամբ հատուկ պահպանվող և անտառային նշանակության տարածքներում բռնկված հրդեհներից ինչպես նաև Երևանի և մի շարք այլ քաղաքների շրջակա միջավայրի որակի վատթարացմամբ առաջացած վնասների հաշվարկներից):

2012–2015 թթ. ածխածնի օքսիդի, փոշու և այլ վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտության գերազանցումը կամ տարեկան քանակական աճը ահազանգ է կենտրոնական նյարդային համակարգի և ինուն հակամարմինների հետ կապված հիվանդությունների առաջացման ու զարգացման մասին: Ըստ մեկ այլ՝ շրջակա միջավայրի

¹ <http://www.armstat.am/am/?module=publications&mid=6&id=1608>

<http://www.armstat.am/am/?module=publications&mid=6&id=1606>

² <http://www.armstat.am/am/?module=publications&mid=6&id=1705>

³ <http://www.armstat.am/am/?module=publications&mid=6&id=1821>-ում նշված այս տվյալը ենթադրվում է, որ տպագրական վրիպակ է, ինչն էլ թույլ է տալիս անվստահություն ձևավորել ԱՎԾ-պաշտոնական էջում գետնեղված տվյալների նկատմամբ:

որակական վիճակին վերաբերող ուսումնասիրության, Հայաստանում անտառի կենսազանգվածում (վերգետնյա և ստորգետնյա մասեր) կուտակված ածխածնի պաշարը 48 տ/հա է, ընդ որում, 1990–2010 թթ. ընթացքում դա 17 մլն տոննայից նվազել է մինչև 13 մլն տոննա¹: Այս դրական միտումն էլ պայմանավորված է նրանով, որ կանաչապատման, անտառվերականգնման և անտառապահպանությանն ուղղված միջոցառումները ֆինանսավորվում են ոչ միայն պետական բյուջեի, այլև միջազգային ներդրումային ու դրամաշնորհային ծրագրերի միջոցներով: Անտառային տնտեսություններում կատարված հիմնական աշխատանքներն ըստ անտառի տնկման և ցանքի 2014 թ. կազմել են 42 հա, իսկ 2015 թ.² 9 հա: 2014 թ. անտառապահպանական ծառայությունների համար պետական բյուջեից հատկացվել է 971,8 մլն դրամ², իսկ 2015 թ., ըստ բյուջետային ծախսերի, գործառնական դասակարգման անտառային տնտեսությանը հատկացվել է 1,255,803,4 հազ. դրամ: Արդյունքում կարևորվում է ոչ միայն կատարված բնապահպանական միջոցառումների համար պետական բյուջեի հատկացումների չափը, այլև դրանց նպատակային լինելը, օրինակ՝ ինչպիսի ծառատեսակների (գազադիմացկուն, փոշեկլանիչ, աղմկապաշտպան, արագած և դաշտապաշտպան) տնկման և անտառվերականգնման (սանիտարական ճիշտ էտումներ, անվտանգ թունաքիմիկատների օգտագործում, կոճղաշիվային վերականգնում և ծառատնկմանն անհրաժեշտ արեալների ընտրություն), իսկ քաղաքային միջավայրում՝ նաև ճանապարհատրանսպորտային հատվածների թաց մաքրման միջոցառումների համար են հատկացվել:

Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղվող ֆինանսական ռեսուրսների համախմբման և նպատակային ծրագրերի իրականացման քաղաքականությունը պետք է ընթանա յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի և սովորական քաղաքացուն մատչելի ընթացակարգով.

1. սահմանել յուրաքանչյուր խումբ տնտեսական գործունեությանը համապատասխան՝ պարտադիր բնապահպանական միջոցառումների ցանկը,
2. մշակել և սահմանել յուրաքանչյուր տարածաշրջանի ասիմիլյացիայի ներուժի մակարդակը և սահմանային թույլատրելի արտանետումների բանկը,
3. առանձնացնել խոշոր քաղաքները շրջանցող երթուղիներ բեռնատար և խոշոր ապրանքատար տրանսպորտային միջոցների համար,
4. մշակել և սահմանել խիստ, սակայն հանրամատչելի աղբատեսակավորման քաղաքականություն:

Շրջակա միջավայրի որակի տնտեսապես արդյունավետ կառավարման գրավակա-նը շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման ճշգրիտ հիմնավորումն է, ինչը կարող են ապահովել միայն համապատասխան մասնագիտական փորձառություն և հմտություն ունեցող ինստիտուտները:

¹ Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա ,ՀՀ 5-րդ ազգային զեկույց, 2014:

² ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ծախսերը, հաշվետվություն, ՖՆ, 2015:

НАДЕЖДА АФЯН

СИСТЕМА ЭМИССИОННЫХ (ВЫБРОСЫ) ПЛАТЕЖЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Ключевые слова: природоохранные платежи, эмиссионные платежи, предельно допустимая концентрация, качество окружающей среды, экологический ущерб, природоохранные меры

В статье раскрываются особенности системы платежей за выбросы или эмиссии в Республике Армения. Даются определения и сравнительный анализ доли выбросов, экологических сборов и расходов на охрану окружающей среды и их целевого значения для улучшения качества окружающей среды. Делается вывод, что в система эмиссионных платежей в Армении как экономический механизм регулирования выбросов может быть решена только в целенаправленной реализации взаимосогласованных решений экономических и экологических проблем.

NADEZHDA AFYAN

SYSTEM OF EMISSION PAYMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: premium payments, emission bonuses, maximum concentration, high quality environmental protection, environmental scarcity, environmental impacts

The article presents the features of emission or emission payments system in the Republic of Armenia. Comparative analysis of the proportion of emissions, environmental and environmental expenditure and their targeted significance in environmental quality improvement were analyzed. A conclusion has been made that if an emission regulation mechanism in Armenia is targeted or purposefully implemented, mutually agreed solutions to economic and environmental issues can be achieved.

ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. էներգետիկ անվանագություն, էներգառեսուրս, էներգետիկ ռիսկ, շրջակա միջավայր, արդյունավետություն, հանածո վառելիք

Էներգետիկ անվանագության մասին խոսելիս նախ՝ պետք է հասկանալ, թե ինչ է դա, ինչը պետք է պաշտպանել և ինչից, ինչպես պետք է չափել դրա մակարդակը: Գոյու-